Նախագահ Թոմաս Ս. Մոնսոն



Ապաշխարության պարգևը

«Մեր պարտականությունն է՝ միջակությունից վեր բարձրանալ դեպի արհեստավարժություն, ձախողումից՝ դեպի նվաճում»,- ուսուցանել է Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնը: «Մեր խնդիրն է՝ դառնալ մեր լավագույն եսը: Մեզ տրված Աստծո մեծագույն պարգևներից մեկը կրկին փորձելու ուրախությունն է, քանզի ձախողումը երբեք չպետք է լինի վերջնակետը»:[1]

Նոր տարվա գալուստը մենք հաճախ զուգորդում ենք որոշումների և նպատակների հետ: Մենք որոշում ենք կատարելագործվել, փոխվել, կրկին փորձել: Թերևս կրկին փորձելու ամենակարևոր միջոցը հանդիսանում է այն, ինչը Նախագահ Մոնսոնն անվանել է «ապաշխարության պարգև»:[2]

Եկեղեցու Նախագահ դառնալուց ի վեր Նախագահ Մոնսոնն իր ուսմունքների հետևյալ հատվածներում մեզ խորհուրդ է տալիս «գործի դնել Քրիստոսի քավիչ արյունը, որպեսզի մենք կարողանանք ներում ստանալ մեր մեղքերից, և մեր սրտերը կարողանան մաքրվել»:[3]

Ներման հրաշքը

«Մենք բոլորս էլ կատարել ենք սխալ ընտրություններ: Եթե դեռևս չենք ուղղել մեր կատարած այդ ընտրությունները, ես հավաստիացնում եմ ձեզ, որ դա հնարավոր է անել: Այդ գործընթացը կոչվում է ապաշխարություն: Ես աղերսում եմ ձեզ՝ շտկել ձեր սխալները: Մեր Փրկիչը վախճանվեց այդ օրհնված պարգևը ինձ և ձեզ մատուցելու համար: Թեպետ ուղին հեշտ չէ, բայց խոստումն իրական է. «Եթէ ձեր մեղքերը կրկնակի կարմիրի պէս լինին, ձիւնի պէս պիտի սպիտականան» [Եսայիա 1.18]: «Եվ ես՝ Տերս, այլևս չեմ հիշում դրանք» [ՎԵՈՒ 58.42]: Մի վտանգեք ձեր հավերժական կյանքը: Եթե մեղանչել եք, որքան շուտ սկսեք ետ դառնալ, այնքան շուտ կգտնեք քաղցր խաղաղությունն ու ուրախությունը, որ գալիս են ներման հրաշքի հետ»:[4]

Վերադարձեք դեպի ճանապարհը

«Թեև շատ կարևոր է, որ իմաստուն ընտրություններ կատարենք, կլինեն պահեր, երբ մենք անմիտ որոշումներ կկայացնենք: Մեր Փրկիչի կողմից տրված ապաշխարելու պարգևը թույլ կտա կարգավորել մեր կյանքը, որպեսզի մենք վերադառնանք դեպի այն ճանապարհը, որը մեզ կհանգեցնի սելեստիալ փառքին»:[5]

Ետդարձի ճանապարհը

«Եթե ձեզանից որևէ մեկը սայթաքել է իր ճանապարհին, ես ձեզ հավաստիացնում եմ, որ կա ետդարձի ճանապարհ: Այդ գործընթացը կոչվում է ապաշխարություն: Չնայած ուղին դժվար է, ձեր հավերժական փրկությունը կախված է դրանից: Ի՞նչը

կարող է ավելի արժանի լինել ձեր ջանքերին: Ես աղաչում եմ, որ դուք այստեղ, այս պահին որոշում կայացնեք և լիովին ապաշխարելու համար քայլեր ձեռնարկեք: Որքան շուտ անեք դա, այնքան շուտ կզգաք այն խաղաղությունը, հանգստությունը և ապահովությունը, որի մասին խոսել է Եսայիան [տես Եսայիա 1.18]»:[6]

Մարդիկ կարող են փոխվել

«Մենք պիտի հիշենք , որ մարդիկ կարող են փոխվել: Նրանք կարող են հրաժարվել վատ սովորույթներից: Նրանք կարող են ապաշխարել օրինազանցություններից: Նրանք կարող են արժանիորեն կրել քահանայությունը: Եվ նրանք կարող են ծառայել Տիրոջը ջանասիրաբար»:[7]

Վերստին դարձեք մաքուր

«Եթե ձեր կյանքում ինչ-որ բան այնպես չէ, դուք դա ուղղելու հնարավորություն ունեք: Դադարեցրեք ամեն անօրինություն: Զրուցեք ձեր եպիսկոպոսի հետ: Ինչ խնդիր էլ լինի, այն կարող եք շտկել ճիշտ ապաշխարությամբ: Դուք կարող եք վերստին մաքուր դառնալ»:[8]

Փրկիչի առանցքային դերը

«Մեր Փրկիչը՝ Հիսուս Քրիստոսը, [փրկության] ծրագրի կարևորագույն մասն է: Առանց Նրա քավիչ զոհաբերության բոլորը կորստյան կմատնվեին: Այնուամենայնիվ, բավական չէ պարզապես հավատալ Նրան և Նրա առաքելությանը: Մենք պետք է աշխատենք և սովորենք, փնտրենք և աղոթենք, ապաշխարենք և կատարելագործվենք: Մենք պետք է իմանանք Աստծո օրենքները և ապրենք դրանցով: Մենք պետք է ստանանք Նրա փրկող արարողությունները: Միայն կատարելով այդ ամենը, մենք ձեռք կբերենք ճշմարտություն և հավերժական երջանկություն»:[9]

ՀՂՈՒՄՆԵՐ

1. “The Stake President,” Ensign, May 1987, 68.
2. «Ընտրություններ», *Լիահոնա,* մայիս 2016, 86:
3. Մոսիա 4.2
4. «Ընտրության երեք դասերը», *Լիահոնա,* նոյ. 2010, 69:
5. «Ընտրություններ», 86
6. «Պահեք պատվիրանները», *Լիահոնա,* նոյ. 2015, 85:
7. «Տեսեք ուրիշներին այնպես, ինչպիսին նրանք կարող են դառնալ», *Լիահոնա,* նոյ. 2012, 68:
8. «Քահանայության զորությունը», *Լիահոնա,* մայիս 2011, 67:
9. «Կատարյալ ուղին դեպի երջանկություն», *Լիահոնա,* նոյ. 2016, 80–81:

ԱՅՍ ՈՒՂԵՐՁԻ ՈՒՍՄՈՒՆՔԸ

Մենք բոլորս էլ անկատար ենք. միայն ապաշխարության պարգևի միջոցով, որը հնարավոր է դարձել Հիսուս Քրիստոսի քավության շնորհիվ, մենք կարող ենք մաքրվել մեղքից և բարելավել մեր կյանքը: Ձեր ուսանողների հետ քննարկեք, թե ինչպես ենք մենք «կարգավորում մեր կյանքը» ապաշխարության միջոցով: Իրենց կյանքում կատարած դրական փոփոխությունների շնորհիվ նրանք ինչպե՞ս են ավելի մոտ զգում Երկնային Հորը և Հիսուս Քրիստոսին: Դուք կարող եք ձեր ուսանողներին խնդրել նոր տարվա համար գրել հոգևոր որոշումներ և իրենց առաջընթացի մասին հաշվետվություն ներկայացնել ընկերոջը, ամուսնուն կամ ընտանիքի այլ անդամի:

ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐ

Վճռեք ապաշխարել

Նախագահ Մոնսոնը բացատրում է. «Մեր պարտականությունն է միջակությունից վեր բարձրանալ դեպի արհեստավարժություն, ձախողումից՝ դեպի նվաճում: Մեր խնդիրն է դառնալ մեր լավագույն եսը»: Շատ մարդիկ հունվարը նվիրում են առաջխաղացման հետ կապված նպատակներ և որոշումներ կայացնելուն՝ հաճախակի ժպտալ, ուտել առողջ սնունդ կամ նոր հմտություն սովորել: Թեև այս նպատակները կարող են օգնել ձեզ փոխվել դեպի լավը, փոխվելու լավագույն միջոցն ապաշխարելն է:

Չնայած ապաշխարելը կարող է դժվար լինել, այն պարգև է: Երբ մենք ապավինում ենք Հիսուս Քրիստոսին մեր մեղքերի համար ապաշխարելով, մենք կարողանում ենք աճել ու առաջ շարժվել: Նախագահ Մոնսոնն ասել է. «Մեր Փրկիչը՝ Հիսուս Քրիստոսը, [փրկության] ծրագրի կարևորագույն մասն է: Առանց Նրա քավիչ զոհաբերության ամեն ինչ կկորչի»: Ապաշխարության միջոցով դուք կարող եք մաքրվել ձեր մեղքերից և ավելի նմանվել Նրան:

Մտածեք, թե ինչն է ձեզ խանգարում նմանվել Փրկիչին: Արդյո՞ք դա ձեր լեզուն է: Ինչպե՞ս եք վերաբերվում ձեր ընկերների կամ ընտանիքի հետ:

Երբ մտածեք, թե որ հարցում կարող եք կատարելագործվել, աղոթեք Երկնային Հորը և արտահայտեք փոխվելու ձեր ցանկությունը: Հիշեք, որ Իր Քավության զորությամբ, Հիսուս Քրիստոսը կարող է օգնել ձեզ հաղթահարել ձեր թուլությունը: Ինչպես ուսուցանել է Նախագահ Մոնսոնը. «Մեր Փրկիչի կողմից տրված ապաշխարության պարգևը թույլ կտա կարգավորել մեր կյանքը»:

Թեև նոր տարվա նպատակները կարող են օգնել մեզ աճել, փոխվելու լավագույն միջոցն ապաշխարելն է:

Տես նաև «Ութ առասպել ապաշխարության մասին» lds.org/go/1186-ում:

ԵՐԵԽԱՆԵՐ

Ապաշխարությունը պարգև է

Ապաշխարության պարգևը դուք չեք կարող տեսնել կամ շոշափել: Սակայն այն մի պարգև է, որը դուք կարող եք զգալ: Սա նշանակում է, որ երբ սխալ ընտրություն ենք կատարում, մենք կարող ենք ապաշխարել և կրկին զգալ խաղաղություն ու երջանկություն:

Երկնային Հայրը և Հիսուսը միշտ կօգնեն մեզ ապաշխարել: Նկարներ նկարեք՝ կապված ապաշխարության տարբեր քայլերի հետ:

Մենք զղջում ենք:

Մենք աղոթում ենք Երկնային Հորը, պատմում Նրան, թե ինչ է պատահել և խնդրում Նրա օգնությունը, որ հաջորդ անգամ ավելի ճիշտ ընտրություն կատարենք:

Մենք ներողություն ենք խնդրում և փորձում շտկել ամեն բան:

Մենք խաղաղություն ենք զգում և հասկանում, որ ներված ենք:

© 2018 by Intellectual Reserve, Inc. Բոլոր իրավունքները վերապահված են: Տպագրված է ԱՄՆ-ում: Անգլերենի հաստատումը. 6/17: Թարգմանության հաստատումը. 6/17: *First Presidency Message, January 2018*-ի թարգմանությունը: Armenian. 15045 201

Շփվեք նրա հետ ցանկացած ժամանակ, ցանկացած վայրում, ցանկացած ձևով

Հավատք, ընտանիք, սփոփանք

Այցելությամբ ուսուցանելը վերաբերում է ծառայությանը: Հիսուսը ծառայում էր ցանկացած ժամանակ և ցանկացած վայրում: Մենք նույնպես կարող ենք այդպես անել:

«Ծառայել» նշանակում է՝ ծառայություն մատուցել, հոգ տանել կամ անել ցանկացած բան, որը նպաստում է ուրիշներին մխիթարելուն կամ երջանկացնելուն: Այցելությամբ ուսուցանումը վերաբերում է ուղիներ գտնելուն, թե ինչպես ծառայել նրանց, ում այցելում ենք: Հիսուսը ծառայում էր բոլորին ցանկացած ժամանակ և ցանկացած վայրում: Նա կերակրեց 5000 մարդու, մխիթարեց Մարիամին ու Մարթային նրանց եղբոր մահվան ժամանակ և ուսուցանեց Իր ավետարանը ջրհորի մոտ գտնվող կնոջը: Նա արեց այդ Իր անկեղծ սիրո շնորհիվ:

Հետևելով Նրա օրինակին՝ որպես այցելող ուսուցիչներ, մենք կարող ենք ճանաչել և սիրել յուրաքանչյուր քրոջ, ում այցելում ենք, հիշելով, որ սերը հիմքն է այն ամենի, ինչ մենք անում ենք: Երբ մենք աղոթում ենք ոգեշնչման համար, որ իմանանք , թե ինչպես ծառայել նրան և օգնել նրան ամրացնել իր հավատը, «հրեշտակներին հնարավոր չի լինի զսպել [մեր] ընկերակիցները լինելուց»:[1]

1842թ. Սփոփող Միության կազմավորումից մինչև այսօր կանանց ծառայություններն օրինել են կյանքեր: Օրինակ, Ջոան Ջոնսոնը՝ 82-ամյա մի այրի և նրա այցելությամբ ուսուցանող զուգընկերն այցելում են ուսուցանելու իրենց 89-ամյա հարևանուհուն, ով տառապում է թոքաբորբով: Նրանք հասկացան, որ իրենց հարևանը ավելի շատ, քան ամիսը մեկ անգամ կարիք ունի այցելության, ուստի սկսեցին այցելել կամ հեռախոսազրույց ունենալ նրա հետ ամեն շաբաթ:

Այլ այցելող ուսուցիչների համար քաջալերող հաղորդագրություն կամ նամակ ուղարկելը կարող է լինել լավագույն բանը, որ նրանք կարող են անել մի քրոջ համար այդ ամիս: Անձնական կապեր ստեղծելը և սիրով լսելը այցելությամբ ուսուցման առանցքն են: Ժամանակակից տեխնոլոգիաները և անձամբ այցելությունն օգնում են մեզ անել դա ցանկացած ժամանակ, ցանկացած վայրում և բազում եղանակներով:[2] Դա Հիսուսի նման ծառայելն է:

ՀՂՈՒՄՆԵՐ

1. *Եկեղեցու նախագահների ուսմունքները. Ջոզեֆ Սմիթ* (2007), 482:
2. Տես *Ձեռնարկ 2. Եկեղեցում ապաստարան* (2010), 9.5.1:

Խորհեք այս մասին

Ինչպե՞ս ենք մենք դադարում անհանգստանալ այցելությամբ ուսուցանելու «պահանջների համար» և դրա փոխարեն կենտրոնանում այն փաստի վրա, թե ինչով կարող են աջակցել այցելող ուսուցիչները յուրաքանչյուր քրոջը:

Ծառայություն

Բացի հատուկ ուղերձից, ամեն ամիս այս էջը կներկայացնի տարբեր սկզբունքներ՝ օգնելով մեզ ավելի արդյունավետ ծառայել միմյանց: Երբ դուք աղոթեք և ոգեշնչում փնտրեք, կիմանաք, թե ինչ հոգևոր ուղերձի և ծառայության կարիք ունի յուրաքանչյուր քույր:

© 2018 by Intellectual Reserve, Inc. Բոլոր իրավունքները վերապահված են: Տպագրված է ԱՄՆ-ում: Անգլերենի հաստատումը. 6/17:
Թարգմանության հաստատումը. 6/17: *Visiting Teaching Message, January 2018*-ի թարգմանությունը: Armenian. 15045 201